

ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԻԿՅԱՆ

ՈՒՐԱՐՏԵՐԵՆ ԿԵՐՊԻ/ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՇՈՒՐՋ (նոր դիտարկումներ)

Հոդվածը ևս մեկ անդրադարձ է ուրարտերենում կերպի/ժամանակի քերականական կարգին, որին նվիրված էր սույն մատենաշարի XXII հատորի մեր հոդվածը:

I. Այս բաժնում կքննենք Գյովելեքի արձանագրության² մի հատված (դիմային կողմի I սյունակի 4-12 տողերը), որն աչքի է ընկնում սահմանական եղանակի բայաձևերի զանազանությամբ:

Գրադարձություն

4. ^dhal-di-ni-ni us-ma-ši-ni EN-si-ni-ni
5. a-lu-uš-me šu-i-ni e-si-i-ni mu-ši
6. ū-e-se-la-še ū-e-ši-i-gi
7. a-lu-uš-me tu-bar-du-ni ū-bar-du-gi
8. a-lu-uš-me LUGÁL-tú-lji DAN.NU a-ru-ni
9. na-ḫa-di LUGÁL-tú-ḫi-ni-na ^{GIŠ}GU.ZA te-ru-me
10. GIŠ LUGÁL-tú-ḫi-ni-i šú-gu-ki uš-ḫa-nu-me
11. ū-e-se-la-se mu-ši a-lu-ka-a
12. ū-e-ši-ia-ú-li PAP KUR.KUR^{MEŠ}

Թարգմանություն

(4) Խաչի (աստծո) տերունական զորությամբ, (5) որդի-ին՝ ... (6) ... իշխում է (*), (7) որդի-ին՝ հզորություն/ամրություն(*) հաղորդեց/հանձնեց(*) (8) որդի-ին՝ հզոր արքայություն տվեց, (9) ես մատած եմ արքայության/արքայական զահին: Նա հաստատեց-ինձ (համար) (10) արքայական զալիստն, հենց հասկապես ինձ/ իմ ձեռքը(*) հանձնեց-ինձ (11) ճշմարիտ իշխանություն, որով (12) ես տիրում եմ ամբողջ երկրին/ժողովրդին:

Մեկնաբանություններ

5-6) Թեև ակնհայտաբան միևնույն արմատը պարունակող *ú-e-se-la-še* և *u-e-ši-i-gi* բառերի իմաստը անհայտ է, այնուհանդերձ *ú-e-ši-i-gi*-ն վստահաբար կարող ենք վերլուծել որպես ներկա ժամանակի/անկատար կերպի 3 դ. եզ. բայաձև *wešy=(i)e* և դասել մեզ հայտնի *aly=(i)e* “մա ասում է”, *tüy=(i)a=ne* “մա ասում է-այն (=ne)”, *ui...ar=ia=ne* “մա չի (ui) տալիս-նրան (=ne) բայաձևերի շարքին³։ Կիսաձայնավորի արտահայտումը *gV* և, հատկապես, *gi* նշանով լայնորեն վկայված է ուրարտական տեքստերի դիվանում, հմմ. *ye(y)* անորոշ դերանվան *gi-e(-i)* և *sida(y)ure* “(չի/չէր) կառուցված” ժխտական դերբայի *ši-da-gu-ri//ši(-i)-da(-a)-ú-ri(-e)* գոյությունը։ Կ-ն վերագրում ենք արմատին, ոչ թե էրզատիվ վերջավորությանը, ելնելով այն փաստից, որ նույն այդ հնչյունը առկա է նաև 12-րդ տողի *u-e-si-ia-ú-li* բայաձևում, որտեղ այն նախորդում է ոչ թե *=(i)e* 3 դ. եզ. էրզատիվ ցուցչին, այլ *a* ձայնավորով սկսվող ածանցին, որի մասին տե՛ս ստորև։ Ընդունելով *wešy=* բայի համար Ե. Գրեկյանի առաջարկած “իշխել” նշանակությունը՝ այս նախադասությունը կարող ենք ենթադրաբար թարգմանել “որը (իմա՝ Խաղին)-ինձ ...իշխում/դեկավարում է”։ Չմայած ենթակայի (*alusme*) և ստորոգյալի (*wešye*) միջև ընկած բոլոր բառերի իմաստը, բացի մեկից (*ú-e-še-la-še*), կարծես թե, պարզ է (*šu-i-ni e-si-i-ni mu-ši* “ամբողջ ճշմարիտ տեղը”), մենք ձեռնպահ կմնանք նախադասության այդ անդամների թարգմանությունից, քանի որ նրանց շարահյուսական վերլուծությունը կապված է որոշ դժվարությունների հետ։

7) Այս նախադասության բառերի իմաստը, բացի *a-lu-uš-me-iğ* (“որը-ինձ”), հայտնի չէ։ Թեև նրանցից առաջինը (*tu-bar-du-ni*) մնում է անցյալ ժամանակի/անկատար կերպի 3 դ. եզ. բայաձևին (հմմ. *a-ru-ni* “մա տվեց”, *ha-u-ni* “մա վերցրեց”, *i-zi-du-ni* “մա հրամայեց”), մենք համաիտ ենք Ե. Գրեկյանի հետ, որը, ի տարբերություն Մ. Սավինիից, այն համարում է գոյական անուն⁴։ *tu-bar-du-ni*-ի համար այստեղ առաջարկված “հզորություն/ամրություն” թարգմանությունը հիմնված է խո-ռիերեն *tup-* արմատի “ամուր” նշանակության վրա⁵։

Ինչ վերաբերում է *ú-bar-du-gi* ձևին, ապա այն, ինչպես և նախորդ տողի *ú-e-ši-i-gi*-ն, պարունակում է էրզատիվ շարքի 3 դ. եզ. *=ie* ցուցիչը, սակայն, ի տարբերություն վերջինից, որտեղ այդ ցուցիչը կցված է բայահիմքին (*wešy=ie*), այստեղ այն հետևում է կատարյալ կերպի/անցյալ ժամանակի *=o=* ձևորդին (*ubard=o=ie*)։ Բայական այս ձևի փոխարեն Հաղիի և Չեխբի-բաղիի արձանագրությունների համապատասխան հատվածներում ունենք *ú-bar-a-du-(u)-ia-li* ձևը, որը, անկասկած, նույն

ubard=o=ie ձևն է՝ օծոված 3 դ. հոգն. =le օրյեկտային ցուցիչով. ubar(a)d=o=ia=le (ubard=o=ie ձևի բառավերջի =ie էրգատիվ ցուցիչը. հայտնվելով լրացուցիչ (le) վանկի հավելման արդյունքում շեշտակիր դիրքում, վերականգնել է իր նախնական a ծայնավորը, հմմ. վերը հիշատակված aly=(i)e, բայց tiy=(i)a=ne): Գյովելեքի արձանագրության u-bar-du-gi և Հադիի ու Չելեքի-բադիի արձանագրությունների u-bar-a-du-(u)-ia-li ձևերի գուգահեռ գործածությունը թույլ է տալիս վերջիններում u-e-ši-i-gi ձևին գուգահեռ վերականգնել u-e-ši-[u/ü-ia(-a)-le] ձևը, u-e-ši-[ia-ú-le]-ի փոխարեն⁵: u-bar-du-gi բայը ենթադրաբար կարելի է թարգմանել “նա հանձնեց/հաղորդեց”:

Քննվող բառակապակցության “հզորություն/ամրություն հաղորդեց” վերծանությունը, սակայն, վերջնական համարել և է. Գրեկյանի “թագ կամեցավ”⁶ թարգմանությունը բացառել ամենևին չի կարելի:

8) a-ru-ni “նա տվեց” բայածեր կատարյալ կերպի/անցյալ ժամանակի 3 դ. եզ. ձևն է՝ 3 դ. եզ. օրյեկտային =ne ցուցչի հավելմամբ: 3 դ. եզ. սուրյեկտային էրգատիվ =(i)e//=(i)a= ցուցիչը հանդես է գալիս այստեղ =0= ենթածևայթի տեսքով (ar=o=0=ne): էրգատիվ ցուցչի =0= ենթածևայթի և 1 դ. եզ. =me օրյեկտային դեբանվան համադրությանը հանդիպում ենք te-ru-me “նա հաստատեց-ինձ (համար)” (տող 9) և սժ-հա-նու-me “նա պարզեց/հանձնեց-ինձ” (տող 10) ձևերում:

9) այս նախադասության nah=a=de-ի թարգմանությունը ներկա, ոչ թե անցյալ ժամանակով⁷ պայմանավորված է խնդրի/պարագայի լոկատիվ հոլովածով (լոկատիվ հոլովի =a ցուցիչը արտահայտված է ոչ թե ^{Gl}GU.ZA գաղափարագրով գրված խնդրի, այլ վերջինիս LUGÁL-tú-hi-ni-na լրացման մեջ): Ի տարբերություն լոկատիվ հոլովից, ուղիղ (բացարձակ) հոլովով արտահայտված նույն այդ բայի (nah=) խնդիրը ցույց է տալիս գործողության ուղղությունը. nah=a=de ... esi=i⁸ LUGÁL-tuhine “ես նստեցի ... թագավորական տեղին-մրա (=i)” (հմմ. ռուս. “я восседаю на троне” և “я воссел на место”):

LUGÁL-tú-hi-ni-na-ն, ի տարբերություն նախորդ տողի LUGÁL-tú-hi “թագավորություն” վերացական գոյականից, կամ այդ գոյականից ածանցյալ մեկ այլ վերացական գոյական է (հմմ. ռուս. царство և царственность), կամ ածական անուն “թագավորական” իմաստով: Այդ ձևի –ni տարրը ոչ թե լրացմանը հատկացյալի/որոշյալի հոլովական վերջավորությունը միացնող =ne հարաբերակցական մասնիկն է, այլ ածանց, որին կցված է վերոհիշյալ =ne հարաբերակցական մասնիկը և լոկատիվ հոլովի =a ցուցիչը. LUGÁL-tuhini=n(e)=a (հմմ. Haldi=i=ne=ne usmaši=ne “Խալդիի գործքամբ”, որտեղ հատկացյալի բացառական-գործիական հոլովի =ne ցուցիչը =ne հարաբերակցական մասնիկի միջոցով միացվել է Haldi=i սեռական հոլովի ձևին):

Այս տողի վերջին (te-ru-me “մա դրեց/հաստատեց ինձ համար”) ըստը վերաբերում է հաջորդ նախադասությանը:

10) $\text{\$u-gu-ki/\$u-gu-u-ki}$ բառակի համար առաջարկվել են հետևյալ թարգմանությունները. “ինձ հետ” (Ն. Հարությունյան, Ե. Գրեկյան)⁹, “միայն ինձ” (Մ. Սալվինի)¹⁰, “իմ ձեռքը” (Զ. Գիրբալ)¹¹: Վերջինս համեմատում է այս բառակի su- տարրը խոռոչներն $\text{\$u}$ -ը “ձեռք” բառի հետ և, վերագրելով ուրարտերեն su-ին “ձեռք” նշանակությունը, վերլուծում ամբողջ բառակը որպես $\text{\$u-}$ գոյական + gV գրանշանով արտահայտված γ անցումային հնչյուն (glide) + $=uke$ 1 դ. եզ. ստացական դերանվանական ածանց և թարգմանում այն “(մա տվեց, հանձնեց, դրեց) իմ ձեռքը”:

Որքան էլ որ Զ. Գիրբալի վերլուծությունը համոզիչ թվա, $\text{\$u-gu-ki}$ ձևին կարելի է տալ մեկ այլ բացատրություն ևս:

$\text{\$i-da-gu-ri//\$i(-i)-da(-a)-u-ri(-e)}$, $\text{u-bar-du-gi//u-bar-a-du(-u)-ia-li}$ գրությունների հերթագայությունը մեզ թույլ է ստալիս $\text{\$u-gu(-u)-ki}$ ([$\text{\$u y u k e}$]) բառակը համարել ուրարտական դիվանում քանիցս հանդիպող $\text{\$u(-u)-ki}$ ձևի տարբերակը ([$\text{\$u k e}$]): Վերջինիս համար մասնագիտական գրականության մեջ առաջարկվել են հետևյալ թարգմանությունները “ինչպես (որ)”¹², “հենց (որ)”¹³, “ինձ”¹⁴:

Հետևելով Ի. Մ. Դյակոնովին, այս ձևը դիտարկում ենք որպես $\text{\$u=}$ 1 դ. եզ. անձնական դերանվան թեք հոլովածակի հիմքի¹⁵, γ անցումային հնչյունի, $=uke$ տարրի և $=(i)e$ տրական հոլովի ցուցչի կապակցություն. $\text{\$u y u k (e)=(i)e}$ “ինձ”: Ուշադրության արժանի է $=uke$ տարրի (որը, հավանաբար, 1 դեմքի հետ հարաբերակցվող դեյկտիկ [ցուցական] ածանց է) ներկայությունը հաջորդ տողի al= հարաբերական դերանվան թեք (ընկառիվ) հոլովածակում, ի տարբերություն այդ դերանվան էրգատիվ ($\text{alu=\$e}$) և բացարձակ (ale) հոլովածակներից:

$\text{\$u-gu(-u)-ki//\$u(-u)-ki}$ ձևը, բացի քննվող տեքստից, վկայված է հետևյալ արձանագրություններում (տեքստերի համարները տրված են ըստ KUKH).

1) [$\text{d}^h\text{al-di-i}\text{\$-me}$... $\text{\$u-u-ki}$ a-ru-ni “Խալդին-ինձ ... $\text{\$u-u-ki}$ տվեց” (271₄);

2) $\text{\$u-gu(-u)-ki}$ u $\$$ -ha-nu-me u-e- $\$e$ -la- $\$e$ mu-(u)- $\$i$ “մա $\text{\$u-gu(-u)-ki}$ հանձնեց-ինձ ճշմարիտ իշխանություն” (406 лнц.₂₇, 407 лнц. 26);

3) $\text{\$u-u-ki}$ $\text{d}^h\text{al-di-}\mathit{\$e}$ i-zi-du-ni a-ru-me ie $\$e$ (!) za-du(-u)-bi “ $\text{\$u-u-ki}$ Խալդին պատգամ տվեց-ինձ, ես արեցի/կատարեցի” (406 лнц.₄₃, 407 лнц. 31-32);

4) $\text{\$u-ki}$ $\text{d}^h\text{al-di-i-}\mathit{\$e}$ i-zi-du-u-ni i-e- $\$e$ za-du-bi “ $\text{\$u-ki}$ Խալդին պատգամեց, ես արեցի” (427₃);

5) sū-ki ^dhal-di-se ū-bar-du-du-ni i-e-se ši-di-iš-tū-bi / ... te-ru-bi “հի-կի Խալդին հանձնարարեց, ես կառուցեցի (419₅₋₆) / ես ... տնկեցի (421₉, 11):

Եթե Ք. Գիրքալի թարգմանությունը կարելի է ընդունել 1) և 2) նախադասությունների համար (“նա իմ ձեռքը դրեց”, “նա իմ ձեռքը հանձնեց”), ապա մյուսների համար նախընտրելի է մեր առաջարկած վերծանությունը (անցյալում ոչինչ չկար/արված չէր, Խալդին *had* պատգամեց, ես արեցի):

Անշուշտ, կարելի է ենթադրել, որ izidu- և ubardu- բայերը “տալ”, “հանձնել” բայերի հոմանիշներն են: Սակայն այդ դեպքում դժվար կլինի բացատրել 3) նախադասությունը, որն իրավացիորեն ընդունված է թարգմանել “նա հրաման/պատգամ տվեց”:

11) ū-e-se-la-se (wešela=še) վերացական գոյականի համար ընդունում ենք Ե. Գրեկյանի առաջարկած “իշխանություն” թարգմանությունը¹⁶:

a-lu-ka-a ձևը, ինչպես վերը նշվեց, ale հարաբերական դերանվան թեք (յոկատիվ) հոլովի ձևն է. al=uk(e)=a: Լոկատիվ հոլովի գործածությունը սպասված բացառական-գործիականի փոխարեն (հմմ. ušmaše=ne “գործությամբ”), հավանաբար, պետք է բացատրել wešy- բայի խնդրառությամբ:

12) ū-e-ši-ia-ū-li գրության ետևում, մեր կարծիքով, թաքնված է անկատար կերպի/ներկա ժամանակի 1 դ. եզ. բայաձևը. wešy=aw/v=le: Այս բայաձևի =aw/v տարրը լիովին համընկնում է խոռոհերեն 1դ. եզ. էրգատիվ =aw/v ցուցչի հետ (հմմ. tan-aw/v “ես անում եմ”, tan=oš=aw/v “ես արեցի”, kad-ed-aw/v “ես կասեմ” և այլն) և, անշուշտ, ունի նույն իմաստը: Կատարյալ կերպի ձևերում այդ ձևությոնը, հնչյունական փոփոխության ենթարկվելով կատարյալ կերպի/անցյալ ժամանակի =o= ցուցչի ազդեցությամբ, հանդես է գալիս =w/v ձևով. par=o=w/v(+=le) “ես քշեցի, գերեվարեցի (+ներանց)”:

Լիովին համամիտ ենք Ե. Գրեկյանի հետ, որն առաջարկում է PAP KUR.KUR^{MES} “ամբողջ տերությունը” ընթերցումը¹⁷ Մ. Սալվինիի KÚR KUR.KUR^{MES} “քնամական երկրներ” ընթերցման փոխարեն¹⁸: Թեև KUR.KUR^{MES} (հնչյունական šurele) եզրի ճշգրիտ նշանակությունը պարզ չէ, վերջինիս կապը ուրարտական տերության և բնակչության հետ ակնհայտ է¹⁹: Դա, մասնավորապես, երևում է Մենուայի Անգափութեփեի արձանագրությունների 26-28 (KYKH 148) և 26-30 (KYKH 149) տողերում, որոնց համար առաջարկում ենք հետևյալ վերծանությունը. qiwra=ne hišan=i=be GÁN^{MES} ŠAM^{SE} ... GİŠ^{ulde} naḥ=i=be KUR^{šurele} piz/sad=ia=le²⁰ Menua=ne=ie ernutuḥe=ie “հողը մշակվեց(“), զարու արտեր ..., խաղողի այգի տնկվեց, երկիրը/ժողովուրդը ուրախ/զոհ էր Մե-

նուայի թագավորումից” (նախադասության խնդիր ernothe-ն արտահայտված է տրական հոլովով, հմմ. ոռւս. “они радовались царствованию Менуи”)²¹:

Ուրարտեան pis/zad- բայը լիովին համապատասխանում է խուհիներն pis=and= “ուրախանալ” բային (բաղաձայնից առաջ n հնչյունը սեպագրում հաճախ չէր գրվում): pis/zad- բայը, ինչպես և խուհիներն pisand-ը, միջին սեռի է՝ այդ բայերին հատուկ =ia= ածանցով և արսոյումիվ շարքի սուբյեկտային ցուցիչներով, հմմ. has- “լսել, ունկնդրել”, hut- “աղերսել”, kut- “հասնել” (has=ia=le=me “նրանք ականջ դրեցին ինձ”, hut=ia=de “ես աղերսեցի”, kut=ia=de “ես հասա”)²²:

Ուշադրության արժանի են նաև վերը բերված հատվածի մյուս երկու բայածները (hišan=i=be և nah=i=be) 3 դ. եզ. =be սուբյեկտային ցուցիչն նախորդող =i= ձայնավորը, ի տարբերություն ներգործական բայերի =o= (ar=o=), չեզոք սեռի բայերի =a= (ušt=a=), միջին սեռի բայերի =ia= (has=ia=) և վիճակի բայերի =u= (man=u) ցուցիչներից, հավանաբար, ուներ դեպքային հոլովացման (ապաներգործականացման) նշանակություն և հաղորդում էր բային կրավորական իմաստ: Նախադասության իմաստից ելնելով՝ hišan=o= բայի համար կարելի է ենթադրել “մշակել”, hišan=i=ի համար, համապատասխանաբար, “մշակվել” նշանակությունը, իսկ nah=o= “նստեցնել” բայի nah=i= կրավորական ձևը, ըստ ամենայն հավանականության, պետք է նշանակեր “նստեցվել, տնկվել” (հմմ. ոռւս. сажать “նստեցնել, տնկել”)²³:

II. Այս բաժնում կանգնադրված nuld- բային, որի իմաստի ճշգրտումը կարող է նոր նյութ ընձեռել ուրարտեանում կերպի քերականական կարգի ուսումնասիրման համար:

nuld- բայը ուրարտական տեքստերի դիվանում վկայված է Ռուսա I-ի Թովուզավայի (KYKH 387) և Մովանայի²⁴ ուրարտա-ասուրական երկլեզու արձանագրությունների կրկնօրինակներում, ինչպես նաև նույն թագավորի Նոր-Բայազետի արձանագրությունում (KYKH 388):

Թովուզավայի արձանագրության (KYKH 387) ուրարտական տեքստի 28-30 տողերին համապատասխանում են ասուրական տարբերակի 27-28 սաղերը.

ուրարտ. (28) ... šu-si-na MU^{MES} (29) [^{KUR}Bi-ja-i-ni-li nu-ul-du-u-li
^{KUR}lu-lu-i-ni-l[i] (30) [z]i-el-du-bi ...= ասուր. (27) ... ina lib-bi MU^{MES}-ia
^{KUR}URI i/er-ti-[i/piš] (28) [^{KUR}KUR^{MES}] u-si-iq ...

Հետևելով Բ. Գիրբալին²⁵, ըստ որի šu-si-na-ն 1 դ. եզ. ստացական դերանվան ինքնուրույն ձևն է (šú= 1 դ. եզ. անձնական դերանվան թեք հոլովի հիմքը + =usi ածականական ածանցը + =a լրկաաիվ հոլովի ցու-

ցիւր), 𐎎𐎠-si-na MU^{ms} բառակապակցությունը թարգմանում ենք “իմ տարիների ընթացքում”²⁶:

Ասուրերեն տեքստի վերծանությունը կախված է 27 տողի վերջին, ցավոք վնասված, նշանի ընթերցումից (‘i կամ piš): Այդ նշանի piš ընթերցումը հանգեցնում է հատվածի հետևյալ թարգմանությանը. “իմ տարիների ընթացքում Վիայնեի (երկիրը) ընդլայնվեց”²⁷ (կամ՝ ես ընդլայնեցի”²⁸), թշնամի երկրները ես ճնշեցի/սեղմեցի”): Նույն նշանի ‘i ընթերցման դեպքում տեքստը թարգմանվում է. “... ես իշխում/տիրում էի”²⁹ Վիայնեի (երկրին) ...”:

i/er-ti-[piš] և er-ti-[‘i] ընթերցումներից առաջինը մեզ համոզիչ չի քվում հետևյալ պատճառով.

ա) աքքադերեն (ասուրերեն) rps արմատից ածանցյալ Gt հիմքը ունի չեզոք սեռի իմաստ և նշանակում է “ընդարձակվել, տարածվել” (“immer breiter werden”³⁰), հետևաբար, i/er-ti-[piš] բայաձևը կարող է նշանակել “ես ընդարձակվեցի” (er-ti-[piš] տարբերակի դեպքում) կամ “նա ընդարձակվեց” (ir-ti-[piš] ընթերցման դեպքում);

բ) “ընդարձակել” պատճառական (“verbreiten”³¹) իմաստը արտահայտում է rps արմատի D հիմքը, որի 1 դ. եզ. անցյալ ժամանակի ձևն է urappis , ոչ թե ertipiš;

գ) “ընդարձակվել” (“erweitert werden”³²) կրավորական իմաստը աքքադարենում արտահայտվում է Dt պատճառական-կրավորական հիմքի միջոցով, որի 3 դ. եզ. անցյալ ժամանակի ձևն է urappaš “նա ընդարձակվեց (ինչ-որ մեկի կողմից)”, ոչ թե irtepiš ձևը:

Այսպիսով, i/er-ti-[piš] ենթադրյալ ձևը նշանակում է ոչ թե “ես ընդարձակեցի” կամ “(Վիայնեին) ընդարձակվեց (իմ կողմից)”, այլ “(Վիայնեին) ինքն իրեն տարածվեց”, որ զուրկ է իմաստից:

Ինչ վերաբերում է er-ti-[‘i] ձևին, ապա այն r’y արմատի Gtn հիմքի, որ նշանակում է “(տևականորեն) տիրել/իշխել”, 1 դ. եզ. անցյալ ժամանակի ձևն է (erte’i)³³: “Տիրել/իշխել” նշանակությունը չի հակասում քննվող հատվածի իմաստին, ուստի կարող ենք այն թարգմանել “իմ տարիների (իմա՝ թագավորության) ընթացքում ես տիրում էի Վիայնեին (և) ճնշեցի (sic!)”³⁴ թշնամի երկրները”, ուրարտերեն nuld- բային վերագրել “տիրել, իշխել” նշանակությունը, իսկ nu-ul-du-u-li ձևը վերլուծել որպես կատարյալ կերպի (=o=) 1 դ. եզ. (=w/v) բայաձևի և 3 դ. հոգն. օրյեկտային ցուցի (=le) կապակցություն (nuld=o=w/v=le):

Նոր-Բայազետի արձանագրությունում nuld- բայը վկայված է տեքստը եզրավակող տիտղոսաշարում. (7) ... ^mRu-sa-ni ^{md}Sar₅-du-ri-hi (8) LUGÁL DAN.NU a-lu-še ^{KUR}Bi-a-i-ni-li nu-ul-du-a-li “Ռուսա Սարդուրուրիի (բառացի՝ Սարդուրյան), հզոր արքա, որը տիրում է Վիայնեի (երկրին)”:

Սույն հաավածի *nulđ-* բայը հանդես է գալիս կատարյալ կերպի (=o=) 3 դ. եզ. (=a) ձևի և 3 դ. հոգն. օբյեկտային ցուցչի (=le) կապակցությամբ տեսքով (*nulđ=o=a=le*):

Առաջին հայացքից տարօրինակ թվացող այն փաստը, որ *nulđ=o=* կատարյալ կերպի բայաձևը վերը բերված հատվածներից առաջինում թարգմանվում է անցյալ, իսկ երկրորդում՝ ներկա ժամանակով, պետք է բացատրել բայի իմաստով: *nulđ-* (“տիրել”) բայը պատկանում է այսպես կոչված աթելիկ, ատերմինատիվ (ռուս. неперделельный) բայերի թվին, որոնցով արտահայտված գործողությունը չունի բնական սահման, ուստի և չի ենթադրում ավարտ³⁵: Աթելիկ բայերը, հետևաբար, արտահայտում են բացառապես անկատար գործողություն: Այդուհանդերձ, վերը բերված հատվածներում *nulđ-* աթելիկ բայը հանդես է գալիս կատարյալ կերպի ձևով (ո՛չ իմաստով)՝ մի դեպքում արտահայտելով անցյալում, իսկ մյուսում՝ ներկայում կատարվող գործողություն: Անցյալ ժամանակի իմաստով այդ բայաձևը գործածված է անցյալի դեպքեր նկարագրող պատմողական տեքստում, իսկ տիադոսաշարում, որը ներկա ժամանակ է ենթադրում, այն ունի ներկայի իմաստ: Այս փաստից կարելի է եզրակացնել, որ աթելիկ բայի կատարյալ կերպի ձևը արտահայտում է նկարագրվող դեպքերին զուգընթաց գործողություն³⁶, մինչդեռ անկատար կերպի բայաձևի միջոցով արտահայտվում է ներկա ժամանակը, ի հակադրություն անցյալի: Նման գործածության հանդիպում ենք հողվածի առաջին բաժնում քննված Գյովելեքի արձանագրության 7 և 12 տողերում, որտեղ *wes-* “իշխել” աթելիկ բայի անկատար կերպի ձևերը ներկա ժամանակ են արտահայտում, ի հակադրություն նույն հատվածում վկայված անցյալ ժամանակի/կատարյալ կերպի *ubard=o=ie*, *ar=o=0=ne*, *ter=o=0=ne*, *ushan=o=0=me* բայաձևերին:

MARGARIT KHACHIKYAN

ON THE CATEGORY OF ASPECT/TENSES IN URARTIAN

(new observations)

I. The analysis of lines Recto 4-12 of Rusa I's inscription from Gövelek reveals the following, so far unidentified verbal forms: 3 p. sg. imperfective *wešy=ie* (ú-e-ši-i-gi) “he rules, reigns”, 1 p. sg. imperfective *wesy=aw/v=le* (ú-e-ši-ia-ú-li) “I rule, reign” and 3 p. sg. perfective *ubard=o=ie* (ú-bar-du-gi) “he handed over”.

II. The arguments presented in favor of the reading *er-ti-['i]*, instead of *i/er-ti-piš* in the Assyrian version of Topzawa bilingual, allow the author to ascribe the meaning “to rule” to the corresponding verb of the Urartian version *nulđ-*.

This atelic verb, imperfective by nature, is attested in the Urartian corpus in the form of perfective aspect (on the perfective marker *=o=* in Urartian cf. the author's article in volume XXII of this annual):

... šu-si-na MU^{MEŠ} [^{KUR}Bi-a-i-ni-li nu-ul-du-u-li ^{KUR}lu-lu-i-ni-l[i] [z]i-el-du-bi...
 “in my years I ruled over Viainele (and) oppressed the enemy countries” (KUKN 387
 ass-28-29):

... ^{md}Ru-sa-ni ^{md}Sar₅-du-ri-ḫi LUGÁL DAN.NU a-lu-še ^{KUR}Bi-a-i-ni-li nu-ul-du-a-
 li “Rusa Sardurian, great king, who rules over Viainele” (KUKN 388₇₋₈).

The use of the perfective form of this verb, imperfective by nature, in the sense of both the past and the present tense draws the author to the conclusion that the perfective form of atelic verbs in Urartian expressed simultaneity with the described action, cf. the similar use of the perfective aspect of atelic verbs in the African language Landuma³⁶.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժամանակի քերականական կարգի շուրջ ուրարտերենում, ՄՍԱԵԺ XXII, 2003, 278-283:
2. M. Salvini, Una stele di Rusa III Erimenahi dalla zona di Van, SMEA XLIV/1, 2002, 115-143; Ե. Գրեկյան, Գյոլեղբի ուրարտական արձանագրությունը, ՊԲՀ 2004, #1, 224-252:
3. Sb'u E. Laroche, Glossaire de la langue hourrite, Paris, 1979, 256.
- 3a. Այս ձևորդի օ ընթերցման մասին տե՛ս ՄՍԱԵԺ XXII, 2003, 282, ծանոթագրություն 2:
4. Տե՛ս Ե. Գրեկյան, ՊԲՀ 2004, #1, 229: Այդ կարծիքին է մաս Ն. Հարությունյանը, ինչպես նշում է Ե. Գրեկյանը նշված աշխ. մույմ էջի 16 ծանոթագրությունում:
5. Այդպես են վերականգնել Հադիի և Գլեբի-բադիի արձանագրությունների համապատասխան բացը Ֆ. Վ. Զյոնիզը, (HehI 124, 125) և հետագայում Ն. Հարությունյանը (ԿՄԿՆ 406, 407), հիմք ընդունելով վերոհիշյալ արձանագրություններում մի քանի տող ներքև վկայված *ú-e-ši-ia-ú-le* ձևը:
6. Տե՛ս Ե. Գրեկյան, ՊԲՀ 2004, #1, 229:
7. Կերպի/ժամանակի քերականական կարգը չեզոք սեռի բայերում չէր արտահայտվում:
8. *e-si-i* գրությունը ենթադրել է տալիս, որ բառավերջի *-i* ձայնավորի ետևում քաղնված է 3դ. եզ. ստացական դերանունը (բառացի՝ “ես մտեցի (հայրական) տեղին-մրա քաղաքական”):
9. Н. В. Арутюнян, КՄԿՆ, 465; Ե. Գրեկյան, ՊԲՀ 2004, #1, 250:
10. M. Salvini, SMEA XLIV/1, 2002, 123.
11. C. Girbal, Notizen zum Urartäischen, SMEA XLVI/1, 2004, 25-28.
12. Г. А. Меликишвили, УԿՆ, 407; Н. В. Арутюнян, КՄԿՆ, 465:
13. M. Salvini, SMEA XLIV/1, 2002, 125; Ե. Գրեկյան, ՊԲՀ 2004, #1, 235:
14. I. M. Diakonoff, HuU, 107; М. Л. Хачикян, ХУ, 79.
15. Հետևելով Ն. Հարությունյանին (ԿՄԿՆ, 316, прим.40a), տեքստում ակնհայտորեն սխալմամբ գրված *ḫal-di-še*-ի փոխարեն ընթերցում ենք *ieše*:
16. Տե՛ս Ե. Գրեկյան, ՊԲՀ 2004, #1, 232:
17. Տե՛ս Ե. Գրեկյան, մույմ տեղում, 225, 232:
18. M. Salvini, SMEA XLIV/1, 2002, 117, 128.

19. Այդ մասին տե՛ս, օրինակ, И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, 62; I. M. Diakonoff. I. N. Medwedskaya. The Kingdom of Urartu, Bibliotheca Orientalis. 1987, #1-2/3-4. 393; G. Wilhelm. Šura/i in Kargamiš and das urartäische Gentiliz šurele. SMEA XXXI, 1993, 135-141:
20. Ընթերցվել է ^{KUR}Šurilipi (տեղանուն) zadiale տեքստի հրատարակիչ Ք. Բալքանի (K. Balkan. Ein urartäischer Tempel auf Anzavurtepe und hier entdeckte Inschriften. *Anatolia*, V. Ankara. 1960. 115-122, 125-126) ու Գ. Մելիքիշվիլու (Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи II, *Вестник древней истории*, 1971, #3, 235-236. ##372, 373) և ^{KUR}šurili=pi (šurili+=pi ենկիտիկ նախդիր) zadiale Հարությունյանի (КУКН, 143, прим.15) կողմից: Այս հոդվածը արդեն գրվել էր, երբ մեզ հայտնի դարձավ, որ pisad-ընթերցումը մեզանից առաջ արդեն առաջարկել էր Ք. Գիրբալը (SMEA XLVI/1, 2004, 25-26):
21. Մենք ընդունում ենք Երմուտե *hapax*-ի նույնացումը LUGÁL-nutuhe “թագավորություն, թագավորում” գաղափարագրի հետ (տե՛ս КУКН, 449) և նախընտրում Երմուտե “թագավորում” թարգմանությունը “արդարություն” նշանակությամբ, որը առաջարկել է Ք. Գիրբալը՝ նույնացնելով e/ir-արմատը իր իսկ կողմից վերծանված խոտիերեն ԻՐ- “հալիսսար” արմատի հետ: Վկայակոչելով լատիներենում *aequus* բառի “հավասար” և “արդար” իմաստները՝ նա ուրարտերեն e/ir- արմատին ևս վերադրում է “արդար” նշանակությունը (C. Girbal, SMEA XLVI/1. 2004, 26): Պետք է, սակայն, նշել, որ տեքստում խոսվում է հող մշակելու, այգի տնկելու մասին՝ արարքներ, որոնք, ամշուշտ, պետք է առաջացնեն ժողովրդի գոհունակությունը արքայի թագավորումով, քայք ամմիջականորեն չեն առնչվում արդարության հետ:
22. Միջին սեռի բայերին համասյալասսխանում են ռուսերենի –ся անդրադարձ մասնիկով բայերը. pis/zad=ia= “радоваться”, haš=ia= “прислушаться”, hut=ia= “взмолился”, kut=ia= “добраться”:
23. Այս համատեքստում, սակայն, այնքան էլ պարզ չէ -i- ձայնավորի ներկայությունը սպասված -ia-ի փոխարեն ku-lu-ar-ši-(i-)bi (kuluarš=i=bc) ձևում (КУКН 241 F₂₁), որին վերագրվում է “փախչել, փրկվել” միջին սեռի բայիմաստը:
24. B. André-Salvini –M. Salvini, The Bilingual Stele of Rusa I from Movana, SMEA XLIV/1, 2002, 23.
25. C. Girbal, Selbständige Pronomina der ersten Person Singular im Urartäischen. *Kulturgeschichten. Altorientalistische Studien für Volkert Haas zum 65. Geburtstag*, Saarbrücken, 2001, 143: Հմմ. խոտիերենի համասյալատասխան դերանվան սեռական, տրական և այլ թեք հոլովների šV- հիմքը (šo=wc, šo=wa, šu=da, šu=ra), ի տարբերություն բացարձակ և երգատիվ հոլովների iš/ž/-hg (iš=te, iž=aš), տե՛ս, I. M. Diakonoff, HuU. 107; М. Л. Хачикян, ХУ, 79; I. Wegner, Die selbständigen Personalpronomina des Hurritischen“. SMEA XXIX, 1992, 235.
26. Այլ կերպ է թարգմանում այս բառակապակցությունը Ն. Հարությունյանը՝ “на долгие(?) годы” (КУКН, 291).

27. M. Salvini, La bilingue urarteo-assira di Rusa I, *Tra lo Zagros e l'Urmia. Ricerche storiche ed archeologiche nell'Azerbaidian Iraniano* (P. E. Pecorella, M. Salvini et al.), Roma, 1984, 85-86.
28. B. André-Salvini– M. Salvini, SMEA XLIV/1, 2002, 23.
29. И. М. Дьяконов, Заметки по урартской эпиграфике, *Эпиграфика Востока* IV, 1951, 110; Г. А. Меликишвили, УКН, 325; Н.В. Арутюнян, КУКН, 290, 294.
30. St'u W. von Soden, AHw, 955:
31. Նոյն տեղում, 955:
32. Նոյն տեղում, 955:
33. Նոյն տեղում, 976:
34. Այս քարգնանությունը թվադրված է արքայերեն (ասուրերեն) usiq “hu dnzbgj” ձևով:
35. Ю. С. Маслов, К основаниям сопоставительной аспектологии, *Вопросы сопоставительной аспектологии* (под ред. И. П. Ивановой, Ю. С. Маслова и др.), Л., 1978, 13.
36. Նմանատիպ երևույթի հանդիպում ենք ֆիբիկյան լանդումա լեզվում, հմմ. Сумбатова Н. Р., Глагольная система в языке ландума, *Основы африканского языкознания. Глагол* (под ред. В.А. Виноградова, И. Н. Топоровой), М., 2003, 333.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՊԲՀ Պատմա-քանասիրական հանդես, Երևան:

ՄՄԱԵԺ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան:

КУКН Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

УКН Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960.

ХУ Хурритский и урартский языки, Ереван, 1985.

AHw W. von Soden, Akkadisches Handwörterbuch, II, Wiesbaden, 1972

Hchl F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955, 1957.

HuU I. M. Diakonoff, Hurrisch und Urartäisch, München, 1971

SMEA Studi Micenei cd Egeo-anatolici, Roma.